ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1215-12003

ք. Երևան 07.10.2021թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Նվիրաբերող, մի կողմից, և «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամը, ի դեմս համալսարանի ռեկտոր՝ Կ. Հարությունյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Նվիրառու, մյուս կողմից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 562-Ն որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1.Սույն պայմանագրով Նվիրաբերողը պարտավորվում է հատկացնել նվիրաբերության ձևով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի «1215.Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում միջազգային և սփյուռքի հետ համագործակցության զարգացում» ծրագրի «12003.Կրթամշակութային աջակցություն սփյուռքի համայնքներին» միջոցառման նախատեսված միջոցներից ֆինանսավորում՝ 2019 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված N1114-11002 նվիրաբերության պայմանագրով կատարված ծախսերը (ներառյալ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ) փոխհատուցելու նպատակով, իսկ Նվիրառուն ստանձնում է վերոնշյալ որոշման հիմք հանդիսացող պարտավորությունների իրականացումը:

2.Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նվիրաբերողն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգելու նվիրառուի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.2. Առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե Նվիրառուի կողմից իրականացված աշխատանքը չի համապատասխանում սահմանված պահանջներին կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.3. Մինչև աշխատանքի արդյունքը Նվիրբերողին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Նվիրառուին՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները:

2.2. Նվիրառուն իրավունք ունի՝

2.2.1. Մինչև աշխատանքի արդյունքը Նվիրբերողին ներկայացնելը, Նվիրաբերողի կողմից սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Նվիրաբերողից պահանջել վճարելու կատարված աշխատանքի համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2. կետով նախատեսված դեպքի,

2.2.2. Մինչև աշխատանքի արդյունքը Նվիրբերողին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Նվիրաբերողին:

3. Նվիրաբերությունը տրամադրելու և ծախսելու կարգը

3.1. Նվիրաբերության ընդհանուր գումարը կազմում է՝ 13 562.6 (տասներեք միլիոն հինգ հարյուր վաթսուներկու հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:
3.2. Սույն պայմանագրով տրամադրված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1. կետով նշված նպատակների համապատասխան:
3.3. Նվիրառուն պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:
3.4. Նվիրառուի կողմից ստացված և սահմանված ժամկետներում չօգտագործված միջոցները վերադարձվում է Նվիրաբերողին:

4.Պայմանագրի փոփոխման և լուծման կարգը

4.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լուծվել կողմերի համաձայնությամբ: Եթե իրադրության փոփոխման հետևանքով նվիրաբերությունը Նվիրաբերողի սահմանած նպատակին համապատասխան՝ դառնում է անհնար, այն կարող է օգտագործվել այլ նպատակով միայն Նվիրաբերողի համաձայնությամբ:
Պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր:

5.Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7.Այլ պայմաններ

7.1. Սույն պայմանագիրը՝ կազմված երեք էջից, ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 24-ը:

7.2. Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասարազոր իրավաբանական ուժ:

7.3. Սույն պայմանագրի բոլոր լրացումներն ու փոփոխությունները պետք է կազմվեն գրավոր, ստորագրվեն և կնքվեն կողմերի կողմից:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Նվիրաբերող՝	**Նվիրառու՝**
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ք. Երևան, Կառավարական 2 շենք ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011033470	<<Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան>> հիմնադրամ ք. Երևան-10, Թումանյան 42 <<ԱյԴիբանկ>> ՓԲԸ Հ/Հ 11817025561600
Նախարարության գլխավոր քարտուղար՝	Ռեկտոր՝
_____ Ն. Հարությունյան (ստորագրություն)	_____ Կ.Հարությունյան (ստորագրություն)
ԿՏ	ԿՏ